

ՈՃՐԱԿՈՐԾՈՒԹԵԱՆ ՄԻ ՆՈՐ ՎԱՐԻԱՊԵՏՈՒԹԻՒՆ

I

Ի՞նչ է ոճիրը:

Ահա մի հարց, որը ամենին չէ շուարեցնում իրաւաբանին կամ օրէնսգէտին: Նրա պատասխանը մէկին է և պատրաստ: Ոճիրը մի գործողութիւն է կառավարութեան օրէնքների դէմ և ենթակայ պատժի:

Այսպիսի ձևական սահմանը բնականաբար չէ կարող բաւականութիւն տալ ընկերաբանին:

Տրուած լինելով որ՝ ոճիրը առ հասարակ, իւր իսկական տարրերին վերածուած, մի մարդկային գործողութիւն է յար և նման ուրիշ մարդկային գործողութեանց, ընկերաբանը կ'ուզէր իմանալ, թէ ոճիրը ինչով է տարբեր ուրիշ գործողութիւններից, թէ ի՞նչ է նրա նշանակութիւնը անհատական հոգեբանութեան և հասարակական տնտեսութեան մէջ, թէ որոնք են նրա օրդանական կամ արտաքին պատճառներն ու արմատները:

Օրէնսգէտի պատասխանը ոչ մի լոյս չի սփռում հարցի այս բոլոր կողմերի վրայ: Ոճրագործութեան իրաւաբանական սահմանի նոյն իսկ մէկինութիւնը առերևոյթ է: «Ոճիրը օրինաց հակառակ մի գործողութիւն է»: Շատ բարի: Բայց եթէ այդպէս, ուրեմն օրէնքն է ոճրի պատճառը: Արդեօք օրէնքից դուրս նա չէր կարող գոյութիւն ունենալ: Նա միթէ օրէնսդրի կամովի ու գիտակցական ծնունդն է: Նրա գոյութեան պատճառը օրինադրքի մի յօդուածն է: Այդ յօդուածի ջնջմամբ ոճիրը կ'անհետանար: Նա ենթակայ է ուրեմն օրէնսդրի կամայականութեան:

Մակերևոյթապէս դատողին համար տարակոյս չի կայ արդարեւ, որ բոլոր այս հարցերին պիտի պատասխանել. «Այո»: Ոճրաբանական արդարադատութեան կիրառումը վկայում է որ ոճրի ըմբռնումը ժամանակի և միջոցի մէջ փոփոխական մի

էութիւն է: Պիրենեաններէց այս կողմը ճշմարտութիւն, այն կողմը սխալ, ասում է Պասկալ: Նոյն ձևով կարելի էր ասել. ոճիր այս ինչ լայնութեան աստիճանում, թողլատրելի և անդատապարտելի մի ուրիշում. սճիր՝ այսօր, վաղը կամ երեկ օրինաւոր, գուցէ առաքելի գործողութիւն: Ամեն ինչ կախուած է ժամանակից և տեղից:

Ուրացիր Աստուծոյ գոյութիւնը. երեկ այդ մի ոճիր էր, որի համար քեզ հասարակաց հրապարակում խարոյկի կը մատնէին: Այսօր երկիրներ կան, ուր այդ հայհոյանքի համար զեռ ևս քեզ կը բանտարկեն. բայց կան նաև ուրիշ երկիրներ, ուր նոյն այդ հայհոյանքը կարող է երեսփոխանի տիտղոս ստեղծել քեզ համար: Դատիր անյարգօրէն մի ինքնակալի. Լեզուի այդպիսի ազատութեան համար այն ինչ երկրում քեզ մի լաւ կը մտրակեն բանտի բակումը և յետոյ էլ կ'ուղարկեն մի հեռաւոր և ցուրտ կլիմայով երկիր: Անցիր սահմանը, ոչ ոք այլևս քեզ իբր ոճրագործ չի նկատեր և չի էլ մտածեր մինչև անգամ դատապարտել քո խօսքերը: Եթէ այժմ փիլիսոփայական հայեցողութեան և քաղաքագիտական վերնագաւառներից հասարակ գործողութեանց հողի վրայ ցածր դանք, պիտի տեսնենք, որ Ֆրանսիայում տիտղոսներ գողացող և դրա համար այստեղ տաժանակիր աշխատանքներին դատապարտելի չարագործը բաւ է որ մի փոքրիկ ճանապարհորդութիւն անէ դէպի Անգլիա, որպէս զի կարողանայ, եթէ ոչ ընդհանրութեան յարգանքով չըջապատուած, գոնէ խաղաղութեամբ մաքրազարդել իւր գողութեան արդիւնքը: Այսպէս ուրեմն, ոճրի ըմբռնումը ցնդում է հէնց մեր ձևերի մէջ: Ուստի քեզ չէ կարելի որևէ գործողութիւն որակել ոճիր մակդիրով, յառաջ քան ստուգապէս զիտեմալու թէ ո՛ր և երբ է նա կատարուել: Նրան չէ կարելի այլ ևս դասաւորել իւր յատուկ բնոյթի, այլ արտաքին հանգամանքների հիման վրայ:

Այսպէս լինելը արդար և ուղիղ է թւում իրաւաբանօրէն դատողին, իսկ արտօրգից ոչ շատ հեռի՝ կենսաբանին համար, որ մարդկային, կենդանի գործողութիւններին նայում է իբր նախագոյ և գերագոյն քան օրէնքները և օրինադրքերը: Այսու հանգերձ, գտնուեց մի փիլիսոփայական դպրոց, որը օրէնագրին յատուկ իմացականութեան արդարացումն էլ չ'ունի, սակայն և այնպէս կատարելապէս ընդունեց իրաւաբանական հայեացքը: Տարօրինակ և խնդամիտ պարագոկս, անխլանականները՝ համաձայն օրէնքի մարդկանց հետ հաստատում են, որ ոճրի պատճառը օրինադիրքն է, որովհետև նրանց համար օրինադիրքը ոչ մի բարոյական արժէք չ'ունի, ուստի և մերժում են նոյնիսկ

ոճիրը: Եւ սա անժխտելիօրէն տրամաբանական է թուում, եթէ միանգամ ընդունում էք ոճրի այն սահմանը որ տալիս են իրաւունքի ձեռնարկները:

Ոճիր՝ երևոյթի հանգէպ նոյն չափ անվրդով է աստուածաբանը որչափ իրաւաբանը: Նա եղելութիւնների մի դատանիչ ունի որով առանց տատանուելու կարողանում է նրանց որակել. նրանք բարի են կամ չար, ուրեմն առաքինի կամ մեղաւոր, ոճրային, ըստ համաձայնութեան սրբազան գրոց ուսուցման: Նրա համար ևս, ոճրի հիմքը մի օրինադիրք է: Նա և օրէնքի մարդը տարբերում են նրանով, որ մէկի օրինադիրքը մարդկային գործ է, ուրեմն և ոչ փոփոխելի ըստ կամաւ: Եւ ինչպէս մին ունի ոճրի համար մի սահման, աստուածաբանն էլ ունի իւր պատճառադիտական բացատրութիւնը: Դա աստանան է, չարութեան ոգին, որ ներշնչում է մարդուն Աստուծոյ օրինաց հակառակ գործողութիւնները: Յիշատակեցի այս հէնց յիշատակելու համար, սակայն ներողութիւն եմ խնդրում որ չեմ կարող պնդել, զի աստուծաբանական կարգերից շատ էլ ծանօթութիւն չ'ունիմ:

Գիտական բարոյագիտութիւնը դասում է ոճիրը անբարոյականի և չարի հետ, և ըստ իւր հոգեպաշտ կամ նիւթապաշտ լինելուն, նա փնտրում է նրանում վերացական կամ ներքին արմատներ: Բարեշրջական փիլիսոփայութեան համար, որ մարդկային գործողութիւնների բացատրութիւնը կարծում է գտնել օգտախնդրական (utilitarisme) սկզբունքի մէջ, ոճիրը՝ չարի մի մասնաւոր ձևը, համայնքին վնասող մի գործողութիւն է: Սա անշուշտ աւելի հաստատուն մի հիմք է քան օրինադիրքը կամ Աստուծոյ պատուիրանը, սակայն դարձեալ շատ անկայուն: Վասն զի հասարակաց բարւոյն համար չի կայ մի հաստատուն կշիռ, և կարելի է չարիք հասցնել համայնքին տգիտութեամբ, թեթեամտութեամբ, նոյն իսկ լաւ չի կշռադատուած չափազանցութեանց այլասիրութեամբ: Սրանց կարելի է անուանել դատողութեան սխալներ կամ մտաւոր անկատարութիւններ, բայց ոչ ոճիրներ: Սպենսերեան վարդապետութիւնը ոճրի մասին, իբր վնասակար գործողութիւն համայնքի դէմ, շատ դիւրութեամբ պարագլուխի հետեանքների կը տանի: Ուրեմն այն պետական մարդը որ չարիք է հասցնում իւր երկրին մի վնասաբեր քաղաքականութեամբ կամ չարաբաստիկ օրէնքներով մի ոճրագործ է ոչ այն մտքով որ մի կարգ լրագրների բանակութիւն տալիս է այս բառին, հապա այն որոշ, տեսական մտքով, որով կ'ըմբռնէր այն մի ոճրագէտ դատաւոր: Եւ սակայն ծայրայեղութիւն կը լինէր յամենայնիւ նմանեցնել մի կուսակցապետ կամ

Նախարար, որը ըստ պատենութեան օրէնքներ է խմբագրում իր կուսակիցներին հաճելի լինելու կամ հէնց կուսակիցներ ճարելու համար, մի գողի կամ մի մասնագէտ զբաղանհատի հետ: Այդտեղ կայ մի տարբերութիւն որը անգլխաւոր է: Բացարձակօրէն հէնց ամենախստապահանջ բարոյագէտն էլ չը պիտի կամենար:

Այս վարդապետութեան դէմ ուրիշ առարկութիւններ չեն կան: Ո՛վ է տէրը հասարակաց բարւոյն: Ո՛վ է նրա սահման գծողը: Բարենորոգիչը, որու նորմուծումները որչափ էլ լիօրէն օգտակար, դեռ եւս անհասկանալի պիտի մնային կոյր ամբոխին, ուստի և իսկապէս ոճրագործ պիտի նկատուէր: Մեծամասնութիւնը, որպիսին էլ լինի նա, ուրեմն իրաւունք պիտի ունենար, առնուազն փիլիսոփայական իրաւունք, իբր ոճրագործ որակելու ունէ փոքրամասնութիւն, որու գործողութիւնները ըստ իրա հասկացողութեան հակառակ թւէին հասարակաց բարւոյն: Յայտնի կերպով անընդունելի է այս և դատապարտում է սահմանը:

Մի գիտողութիւն եւս Պատմութիւնը ծանօթ է՝ կատարելապէս կազմակերպուած և երբեմն նոյն իսկ բազմամարդ համայնքների հետ, որոնք առանձնապէս ստեղծուած էին և պահուած էին իրանց գոյութիւնը՝ նպատակ ունենալով հաւաքական ոճիրը: Հասկանալի է, որ նրանց գործողութիւններին՝ ոճիր անունը տալիս եմ մեր՝ և ոչ թէ նրանց հայեցակէտից: Այդպիսի համայնքներ էին, մի քանի օրինակներ միայն յիշատակելու համար, Հիւսիսային ծովերի սլաւեան և սլաւոնական ծովահէնները, որոնց կեդրոնն էր Ժոնսուրդ աւանդական քաղաքը: Կարայիբեան ծովի սպանացի և անգլիացի հէները, որոնք տարածուելով Անտիլեան կղզիներէ՝ շահատակում էին ամբողջ Ամերիկեան ծովազրի վրայ: Հիւսիսային Ափրիկէի բերքեր պետութիւնները: Հաւանականօրէն, ի հնումն, նաև Լատիոմի առաջին գաղթականները, ևայն: Բոլոր այս համայնքները ապրում էին միայն գողութեամբ, յափշտակութեամբ և սպանութեամբ, այսինքն այնպիսի գործողութիւններով որոնց ոճիրներ են անուանում բոլոր քաղաքակիրթ մարդիկ: Նրանց համար սակայն ոճիրներ չէին դրանք, և նա որ կատարում էր այդպիսի գործեր, իւր համաքաղաքացիների յարգանքն էր վաշելում իբր նմանելի օրինակ, իբր հասարակական բարեգործ, և պիտի խոստովանել, կատարեալ իրաւամբ, զի որչափ աւելի ապիրատ էր նա մեր հասկացողութեամբ, այնչափ աւելի բազմապատկում էր նա իւր նմաններից կազմուած համայնքի ընդհանուր շահը: Սակայն և այնպէս մենք ամենքս էլ համամիտ ենք որ յափշտակելու նպատակով կատարուած հէնութիւնը, ա-

ւազակութիւնը, սպանութիւնը ոճիրներ են: Ուրեմն մի սահման, որը ուրոյն պարագաների տակ, այդպիսի գործողութիւնները թոյլատրելի, նոյն իսկ գովելի է յայտարարում, չէ կարող ուղիղ լինել:

Կայ և մի ուրիշ յանդիմանութիւն ոճրի օգտախնդրական սահմանի գէմ: Զի եթէ նա յաւակնում է բացատրել նրա ընդհանուր բնոյթը, չէ կարողանում ոչ մի լոյս սփռել նրա ծագման վրայ: «Ոճիրը համայնքին վնասող մի գործողութիւն է:» Ընդունենք մի վայրկեան որ այդ այդպէս է: Բայց այդ գործի հեղինակը ինչու է այն գործում: Ինչու գտնւում են մարդիկ որոնք ցանկանում են, վարժ են իսկ կատարելու այնպիսի գործեր, որոնցից վնաս է հասնում մերձաւորին, մինչդեռ ուրիշներ չ'ունին այդ ձգտումը: Ոճրի պատճառագիտութիւնը սակայն նոյնչափ հարկաւոր է մեզ, որչափ նոյն իսկ ոճիրը, և դեռ ոչինչ չենք գիտեր մենք սրա մասին, եթէ անգիտանում ենք նրա օրգանիկ թէ պատահական պատճառները:

Այս փափաղեկաց լաւագոյն դոհացումն է տալիս իմ ուսուցիչ և բարեկամ Լոմբրոզօի վարդապետութիւնը: Դա մի ամփոփ փորձ է գիտնականօրէն բացատրելու համար ոճիրը, ոչ միայն իւր բնոյթի մէջ, հապա և իւր ենթակայական և առարկայական պատճառների մէջ: Ըստ այդ վարդապետութեան, ոճիրը, կարճ ասած, մի առհաւուրութիւն (atavisme) է: Նա վերաբառաւորութիւն է մեր քաղաքակիրթ միջավայրում այնպիսի իրողութիւնների, որոնք այսօր բացառիկ են և արտասովոր, բայց որոնք նախնական մարդու մօտ սովորական էին:

Այդ էակը մի քիչ ենթադրական է: Մենք այն չենք ճանաչում: Բայց միշտ էլ կարող ենք հետամտիլ նրա մասին մի գաղափար կազմելու, հիմնուելով նախապատմական հնածոյների և ժամանակակից վայրենիների ուսումնասիրութեան վրայ, որչափ էլ սրանք՝ արդէն հեռացած լինէին այն անասնական վիճակից որ յատուկ եղած պէտք է լինի երրորդ չըրջանի մեր նախահայրերին: Պեղումներից լոյս աշխարհ են գալիս բռնութեան հետքերով ոսկորոտիքներ: Մարդաբանական բոլոր մուղէններում կարելի է գտնել առարկաներ որոնց վրայ նախնական զէնքերի, գայլախաղէայ նետերի, քարեայ տապարների նային կատարած դերը տեսանելի է: Ճեղքուած և խորովուած ոսկրներ յայտնում են մարդկութեան սովորութիւններ: Կանացի կմախքներ՝ գանկա-ոսկրաբանական բոլորովին տարբեր տիպի քան առնացի կմախքները որոնց հետ խառն գտնւում են նրանք, անժխտելիօրէն հաստատում են առեանդելու և պղծելու սովորոյթը: Իսկ թէ ստելը յատուկ էր նախ-

նական մարդուն, այդ թոյլատրելի է եղբակացնել մեր երեխաների մտաւորականից: Արդէն իւրաքանչիւր երեխայ ստախօս է և միայն կրթութիւնն է որ հետզհետէ վարժեցնում է նրան ճշմարտախօսութեան. այն էլ ոչ ամենին, և յամենայն զէպս տարբեր աստիճաններով: Արդ, ըստ բարեշրջականութեան կենսաբանական վարդապետութեան, օնտոլոգիան (ontologie), անհատի զարդացումը, կրկնութիւնն է ֆիլոգենիայի (philogénie), տեսակի զարգացման, հետևաբար բաւական է ուսումնասիրել երեխային, ծանօթանալու համար տեսակի՝ մտաւոր զարգացման առաջին քայլերին: Գոյութեան վերաբերմամբ նախնական ժամանակներում, զրական դոկումենտներ չը կան, բայց այդտեղ ևս երեխաների բարձրը, որոնք անշուշտ շատ էլ տարբերութիւն չեն դնում իմ և քոնի մէջ, թելադրում են մեզ առաւելապէս ոչ ցանկալի եղբակացութիւններ անելու: Գալով ժամանակակից վայրենիներին, ընդանրապէս նրանք տէր են այնպիսի բարձրերի, որ եթէ ապրէին մեր մէջ և մեր կեանքով, ենթակայ պիտի լինէին օրինազրքի բոլոր պատիժներին:—Ուրեմն, մեր իսկական նախահայրը, այն է չորրորդ, գուցէ և երրորդ շրջանի վայրենին, կարգին մի սինդրոն է եղել, ամեն ախտերի և ոճիրների սովոր, սկսեալ ստախօսութիւնից և փոքրիկ գողութիւններից մինչև սպանութիւնը մարդակերութեամբ:

Այս պատկերը շատ հեռի է նրանից, որ գծել է մեզ բարեմիտ ժան-ժակ Ռուսսօն: Լոմբրոզօի նախնական մարդը ուղիղ հակապատկերն է Ռուսսօի նկարագրած բարի և առաքինի արարածին որը, ապագայում, մեր վատթար քաղաքակրթութեան շնորհիւ պիտի փճանար և չարանար: Լոմբրոզօի նախնական մարդը մի գազան է և հակընկերական էակի տիպը: Իսկ ոճրագործը՝ մի յետաձնաց նախահաւ, որը կրկնում է մեր մէջ չորրորդ, նոյնիսկ երրորդ շրջանի մարդուն, երեխային և վայրենիին:

II

Այժմ գիտենք թէ ինչ է ոճիրը, ինչ է ոճրագործի մարդաբանական բնոյթը և որն է նրա տեղը տեսակի բարեշրջութեան մէջ: Մնում է իմանալ ինչու ոճրագործը մի առհաւան է: Ինչո՞ւ գտնուում են մեր մէջ էակներ, որոնց վրայ կարծես մեր քաղաքակրթութիւնը ոչ մի ազդեցութիւն չի անում և որոնք՝ մեզանից հարիւր հազար տարիներ առաջ գոյութիւն ունեցող մարդկանց մտաւորականին վրայ են կանգնել: Լոմբրոզօի վարդապետութիւնը այս հարցին պատասխանում է: Ոճրագործը այլասեռութեամբ մէկն է, իսկ այլասեռման յատկութիւնը

հէնց զարգացման դադարումն է: Սերմնորդի (spermatozoide) և ձուի պրոտոպլազման, երբեմն երկուսինն ևս, ժառանգաբար վատթարանում է, նա որակով ստորակարգ է և չէ կարող յանդել իրան բնական զարգացման վերջին կէտին: Անա և զբանից են յառաջանում այլասեռման բոլոր անդամազննական խարանները, որոնք դադարներ են սաղմային և մանկական աստիճանների վրայ, և մի ժառանգականութիւն որ զուգընթաց է անդամազննական շինուածքի այդպիսի յետնեալ, կամ այսպէս ասած՝ անկատար վիճակին:

Փակտերի մէջ անվիճելի է թւում ինձ Լոմբրոզոի վարդապետութիւնը: Լոմբրոզոն այն համբերատար և հաւատարիմ կերպով քննել է, այդ հողի վրայ նա արգարե չէ կարող ունենալ ոչ մի բարեմիտ և մասնագէտ հակասող: Անվիճելի է, որ սովորական ոճրագործները ընդհանրապէս այլասեռեալներ են: Բազմաթիւ են այս առաջարկութեան անդամազննական փաստերը: Մենք հանդիպում ենք այլասեռման խարաններին անհամեմատօրէն մեծ թւով բանտի բնիկների մօտ, քան առանց դատաստանական պարուտայի՝ (?) միկնոյն ցեղի և հասարակական խօսքի մարդկանց մօտ: Կարող են լինել և սովորական ոճրագործներ, առանց այլասեռման խարանների, բայց այդ անշուշտ չափ հազաւադիւս է: Կարելի է մոյնպէս որ դտնուին խարաններ կրող՝ ոչ ոճրագործներ: Այդ վկայում է միայն, որ ոճրի մէջ կենսաբանական բնոյթ ունեցող անհատական գործօնի մօտ կայ նաև նաև մի ուրիշը՝ հասարակական, և թէ ոճրագործական հակումներ ունեցող մի այլասեռեալ կարող է կատարելապէս ոչ մի ոճիր չի գործել, լինի այն պատճառով որ նա ծնուել է և ապրում է այնպիսի մի միջավայրի մէջ, որում ենթակայ չէ ոճրի թելադրութեան և օրինակին, լինի այն պատճառով որ նա հարուստ լինելով կարող է փոխանակ ոճրագործութեամբ, իւր դրամի չնորհիւ օրինաւորապէս բաւականութիւն տալ իր ցանկութիւններին: Արդէն, բարեխիղճ զիտողները և բնազդիկները, վաղուց ի վեր նախազգացել են Լոմբրոզոի անդամազննական վարդապետութիւնը և ճանաչել են այլասեռեալ ոճրագործի տիպը: Ժամանակակից ինքնակոչ գիտնականներ ուրանում են այդ, բայց հին արուեստագէտների նկարներում հաւատարմութեամբ պատկերացած ենք տեսնում այդ բանը: Չարերը, դահիճները, կախաղանի թեկնածուները ամենն էլ Լոմբրոզոի ի ծնէ ոճրագործի տիպը ունին: Արուեստագէտները գտել էին այդ փորձնականութեամբ: Պիտի ասեն ինձ, որ նկարիչները հէնց պարզապէս մարմնացրել են չարը ազեղ դէմքերի վրայ: Բայց կենսաբանօրէն, ազեղը ինչ է եթէ ոչ հակատիպը՝ վասն

զի գեղեցկութեան մեր իդէալը կատարելագործումն է մեր ցեղի կամ տեսակի միջին տիպին, և մեզ ազեղ է թուում այն ամենը որ հեռանում է այդ տիպից։

Ուրեմն առհասարակ, իբր ընդհանուր կանոն, սովորական ոճրագործը մի այլասեռեալ է. թէև բացառաբար, նա կարող է նաև զոհը եղած լինել իր միջավայրի։ Այլասեռումն էլ իւր կարգին, իբր իրան յատուկ բնոյթ, ունի կենսաբանական ստորադասութիւնը, որը գլխաւորապէս արտայայտուում է արատաւոր օրգանիզմի անկարողութեամբ՝ հասնելու տիպական զարգացման գերագոյն աստիճաններին։ Ուստի Լոմբրոզօի վարդապետութեան տրամաբանական չղթաշաւորումը սա է։ Սովորական ոճրագործը մի այլասեռեալ է, այլասեռեալը մի ստորադաս օրգանիզմ է որ, ժառանգական տխրեղծութեամբ, անկարող է լիապէս զարգանալու և իւր զարգացման ճանապարհին ենթակայ է բազմաթիւ դադարներին։

Մինչև այստեղ բոլորովին համամիտ եմ իմ ուսուցչին և բարեկամին, և զի՞ուար է թուում ինձ որ կարելի լինի համամիտ չը լինել նրան։ Բայց երբ հասնում ենք ֆակտերի բացատրութեան, մեր ճանապարհները բաժանւում են։ Ըստ Լոմբրոզօի, ոճրագործը՝ իր զարգացման ճանապարհին կանգ առած մի արխեթ լինելով, մի առհաւեան է։ Արդ, հէնց այստեղ նրա տրամաբանութեան մէջ կայ մի իատոււտ Արդարև, զարգացման ամեն դադար անպատճառ առհաւուրթիւն չէ։

Թող չի վրիպի մեր ուշադրութիւնից այս երկու բառերի սահմանը կենսաբանութեան մէջ։

Զարգացման դադարը, նոյն այդ զարգացման ընդհատումն է մի կէտում որը բարեշրջութեան վերջնական կէտը չէ։ Այդ կէտը կարող է համապատասխանել մի կայանի որը, տրուած մի ժամանակում հէնց վերջակէտ է եղել, բայց որ ներկայումս միջանկեալ է գտնւում, չնորհիւ բարեշրջման շարունակութեան։ Այս պարագան կոչւում է առհաւուրթիւն։

Բայց դադարը կարող է պատահել նոյնպէս մի այնպիսի կէտում որը երբեք վերջակէտ, կայան չէ եղել, այդ պարագայում չը կայ առհաւուրթիւն, հապա հրէշաբանական ճմուռ։

Եւ որովհետև յետադայում ինչ որ ասելու եմ, այս կէտի շուրջն է դառնալու, և կը ցանկանայի անպատճառ հասկանալի եղած լինել, ուստի կարելւոյն չափ պարզելու համար իմ միտքը կը խնդրէի թոյլ տալ ինձ, որ ընթերցողի համբերութեամբ զեղծանելու վտանգովն հսկ, մի քիչ երկարաբանեմ։

Ենթադրենք երկաթուղիի մի կառաշար որի մեքենան վնասուած է. կամ բաւականաչափ ջուր կամ վառելիք չ'ունի։

Այս պարագային կառաչարը իր նպատակակէտին չի հասնիլ: Բայց կարող է կանգ առնել ճանապարհին մի փոքրիկ կայանում, ուր կարելի է գտնել ուտեստ և ծածկ, ուր կարելի է բնակուիլ մի ժամանակ առանց մեծամեծ զրկանքների, ուր կարելի է ճարել մի կտոր շարունակելու համար ճանապարհը, թէև մի քիչ դանդաղ և վատ պայմանների մէջ: Կառաչարը կարող է նոյնպէս վտանգիլ բաց ճանապարհին, հեռու մարդկային ունեւնէրէն կայ, և ճանապարհորդների վիճակը անհամեմատ վատթար պէտք է լինի քան նախորդում: Վերջապէս, կառաչարը կարող է գծերից դուրս գալ, և այդ պատահարը կարող է առաւել կամ նուազ դժբաղդ հետևանքներ ունենալ:

Եթէ ուղիղ է որ ծնողը որդեկան կրկնում է համառոտակի ֆիլոգենիան, կամ ուրիշ խօսքերով ասած, եթէ անհատը կրճատօրէն անց է կենում իր ցեղի բարեշրջական ամբողջ ճանապարհից, ուրեմն և՛ սաղմային զարգացումը անց է կենում այնպիսի յաջորդական ֆազիսներից որոնց իւրաքանչիւրը ներկայացնում է մի որոշ տիպ, որ ի նախնումն կենսունակ էր: Մարդկային սաղմը նախ միաբջիջ կենդանասերմն (zoospore), յետոյ որդ, յետոյ յառաջողային (prévertébral) մի օրգանիզմէ, և այլն: Իւրաքանչիւրը այս յաջորդական տիպերից, կենդանասերմը, որդը, յառաջողային էակը, երկրագնդի կեանքի պատմութեան մի որոշ ժամանակում, եղել է մի վերջակէտ, այն ժամանակում զոյութիւն ունեցող, կեանքի ամենակատարեալ ձևը: Եթէ սաղմաբանական զարգացումը կանգ է առել այս ֆազիսներից մինում, կենդանասերմին, որդին, և այլն, այդտեղ կայ առհաւուրէն: Բայց որոշ կերպով գծուած իւրաքանչիւր այս ֆազիսների միջև կայ դարձեալ անց կենալի մի փոքրիկ ճանապարհ, որը պարզաբար մի ֆազիսից դէպի միւսի անցքն է, բայց որ չէ համապատասխանում իր տեսակի մէջ ոչ մի կատարեալ էակի, որը ունէ ժամանակամիջոցում մի վերջակէտ, մի բարեշրջական վերջակէտ եղած լինէր: Եթէ զարգացումը կանգ է առել այսպիսի որոշածի սահմանուած երկու ֆազիսների ճանապարհամիջում, այդտեղ կայ միայն քառասական կազմակերպութիւն, անկերպարանաւորութիւն (amorphisme), որը ամենին նոյնը չէ առհաւուրէն հետ կամ, իմ օրինակին վերադառնալով՝ այստեղ կայ կառաչարի կանգնումն բաց ճանապարհին կամ նոյն իսկ գծից դուրս գալ, և ոչ թէ վերջակէտից առաջ կանխահաս դադար մի կայանում:

Լոմբրոզօի համար, հասարակ ոճրագործի ներկայացրած զարգացման անվիճելի դադարը առհաւուրէն է: Ես չեմ կար-

ծում, որ այդ հաստատուած լինի: Ինձ համար այդ անկերպա-
րանաւորութիւն է: Վասն զի նա առաջ չի գալիս մի այնպիսի
Քաղիսում, որը համապատասխանէր առհաւեայ ծանօթ կամ հա-
ւանական և ընդունելի մի տիպի: Նախնական մարդու ըմ-
բռնումը իբր պարզամիտ, անդիտակ մի ոճրագործ, անպաշտ-
պանելի է: Երեխայի և վայրենի մարդու մասին մեր ունեցած
տեղեկութիւնը բացասում է այդ գաղափարին: Երեխան ընկե-
րական բնազդներ ունի: Երբ նա միայնակ է, լայ է լինում, և
հանդարտում է, երբ նրա մօտը գալիս է մի ընկեր: Նա եսա-
սէր է, բայց և ընդունակ փոքրիկ զոհողութեանց և ինքնաբեր
աշխարհական զեղումներին: Վայրենին, անշուշտ մի յախուռն
արարած է որի ինքնազսպիչ հոգեկան գործին շատ նախնա-
կան է, և որ այս օրգանիկ թերակատարութեան հետեանօք իւր
բնազդների ստրուկն է, բայց երբէք նա այն հակընկերական ա-
րարածը չէ որ, ըստ սահմանի, պիտի լինէր հասարակ ոճրա-
գործը: Ընդհակառակն, նա լինելով նուազ զանազանակերպեալ
քան քաղաքակիրթ մարդը, աւելի ընկերական է, աւելի «*zoon
politikon*»: Նա ճշդիւ հօտային կենդանի է և խնամքով հեռու է
պահում իրան այն ամեն բաներից, որոնք կարող էին իրա պատ-
կանած հօտին անհաճոյ լինել: Վայրենին ոչ անհատաւորական է
ոչ էլ անիշխանական: Նա անխախտելիօրէն աւանդապահ և կու-
րօրէն հպատակ է իւր ցեղի հասարակական կարծիքին: Այս
պայմանների մէջ անկարելի է որ նա հասարակ ոճրագործ լի-
նի: Նա չի կարող ոչ մի վնաս հասցնել իւր ցեղակից մի անդա-
մին, հակառակ պարագային պատժւում է իր ցեղից, և եթէ
կրկնէ յանցանքը, անշուշտ նրան սպասում է մահը կամ ցեղից
արտաքսումն, որը, մի վայրենիի համար, համահաւասար է մա-
հուան դատապարտութեան: Իր ցեղի մէջ վայրենին ոչ աւա-
ղակ է, ոչ էլ մարդասպան: Նա այդպէս է լինում օտարի հան-
դէպ, որը իրա համար համանուն է թշնամիի: Նկատելի է որ
հէնց սրանում, ինչպէս և ուրիշ շատ բաներում, մենք՝ շատ էլ
տարբեր չենք վայրենիից: Քաղաքակիրթ մարդն էլ, միայն իւր
հայրենակիցներէ հանդէպ պարտաւոր է զգում իրան պարկեշտ,
ազնիւ և քաղաքավարի լինելու: Բայց նա, առանց նրբանկա-
տութեան, կողոպտում և սպանում է օտարներին, որոնց թըշ-
նամի է անուանում: Միակ տարբերութիւնը կարծեմ այն է, որ
քաղաքակիրթ մարդը գողութիւն, սպանութիւն և այլ ամեն
կարգի ոճիրներ գործելուց առաջ, պատերազմի յայտարարու-
թիւն անուանով մի ձևականութեան է ենթարկել իրան, մինչդեռ
վայրենին՝ իւր ոչ-ցեղակիցներին կողոպտելուց առաջ այսպիսի
«արձանագրութեան» չի հետեւում:

Ուրեմն վայրենին մի ոճրագործ չէ։ Ընդհակառակն նա խորապէս, նախապաշարեալ կերպով յարգալի մի էակ է դէպի իր միջավայրի բարքերը և սովորութիւնները։

Յանդուգն չէր լինի, եթէ նոյն գնահատումը անէինք նախնական մարդու վերաբերմամբ։ Նա անշուշտ առանձնակեաց չէր։ Հէնց սկզբից նա ընկերական մի արարած է եղել, և ինչ որ վերև ասացի վայրենիի նկատմամբ, հաւասարապէս կարելի է ասել և՛ նրա նկատմամբ։ Քաղաքակրթութեան ծոցում՝ ոճրագործը մի հակընկերական է։ Նա չի յարգում ոչ մի աւանդութիւն։ Նա մտադիր չէ հասարակաց կարծիքին, եթէ չի հաշուէր նրա երբեմնակի ենթակայութիւնը ուրիշ չարագործների կարծիքին։ Նա տարբերութիւն չի դնում իւրայինների և թշնամիների մէջ։ Վասն զի չը նայած առածին, գողը գողից կատարելապէս գողանում է։ Ուրեմն ոճրագործը քաղաքակրթութեան ծոցում ոչ վայրենի է, ոչ էլ մի նախնական։ Ուրեմն ոճիրը առհաւութիւն չէ։

III

Աշխատեցի ցոյց առնել թէ որչափ թերի են ոճրի վերաբերմամբ տրուած, յայտնի և նոյն իսկ գիտական սահմանները։ Մնում է ինձ այժմ տալ իմ սահմանը։

Ինձ համար ոճիրը մարդկային մակաբուծութիւն է (parasitisme)։ Ահա դրանում է ոճրագործական ամեն կարգի սովորութեան իսկական էութիւնը։ Այդ սովորութիւնը մակաբուծային է։ Մակաբուծութիւնն է նրա սահմանը և բնութիւնը։

Արգարացի է հարցնել ինձ թէ ինչպէս եմ ըմբռնում մակաբուծութիւնը։ Այս խօսքի կենսաբանական իմաստը տարակոյս չի վերցնում և բացատրութեան կարիք չ'ունի։ Մակաբոյժ են կոչւում այն կենդանիները և բոյսերը որոնք սովորաբար ապրում են մէջը կամ վրան մի ուրիշ կենսունակ էակի, բոյս կամ կենդանի, բայց իրանցից տարբեր տեսակի, որոնք անկարող են ապրել առանց հիւրընկալի և որոնք նրան ոչ մի ծառայութիւն չի մատուցանելուց զատ, ընդհակառակն, վնասում են նրան։

Այս սահմանի իւրաքանչիւր խօսքը ունի իւր կարեւորութիւնը։ Որպէսզի իսկապէս մակաբոյժ կարողանանք նկատել մի էակի, հարկաւոր է որ նա համապատասխանէ վերոյիշեալ սահմանի իւրաքանչիւր բառին։ Մակաբոյժ չէ նա, որ ոչ թէ սովորաբար և ստիպողաբար, այլ պատահաբար և ժամանակաւորապէս ապրում է ի վնաս մի հիւրընկալի, եթէ նա սրան մի

ոնէ ծառայութիւն մատուցանում է, եթէ նա կարող է սրանից հեռանալ և իր անհատական ճիգովը ապրել:

Արդէն, մակարոյց խօսքը, չը նայած իր բացայայտ իմաստին, բացարձակ և որոշ ուրուագծով չի սահմանագծում մի բնական երևոյթ, վասնզի հէնց բնութեան իրան անյայտ են այդպիսի բացարձակութիւնները և որոշ ուրուագծերը: Արդարև եթէ իրողութիւնները մօտիկից քննենք, պիտի տեսնենք, որ քիչ թէ շատ բարձր, ոնէ զանազանակերպեալ կեանք մակարուծութիւն է: Հազիւ են գտնուում մի քանի միաբնիշտային գործարանաւոր էակներ որոնք կարող են ապրել միմիայն այն նախնական նիւթերով որ անգործարանաւոր բնութիւնը գնում է նրանց տրամադրութեան տակ, և ձևակերպել՝ նոյնիսկ տարբերից, մերթ-նոյրորդի գաղերից, ջրից և երկրի մետաղներից այն բնաւուծական բաղադրութիւնները որոնցից կազմուած է իրանց պրոտոպլազման և կեանքի սնունդը: Մնացեալ բոլոր գործարանաւոր էակները, առանց բացառութեան, ապրում են ի վնաս ուրիշ և նախկին գործարանաւորութեանց: Բոյսերը սնանում են ուրիշ բոյսերից կամ կենդանիներից պատրաստուած նիւթերով, իսկ կենդանիները ուտում են բոյսեր կամ կենդանիներ: Բոլորովին պայմանական է մակարոյց անուանել ռաֆէզիային կամ լոֆոֆիտին որոնք միայն հասարակածային բոյսերի վրայ են ապրում, և մակարոյց անունը չի տալ, օրինակ, սուռկերին որոնք սնուում են միայն բուսական կամ կենդանական կիսափուտ նիւթերով, մակարոյց անուանել տէնիային կամ բիւրադիային, որոնք ապրում են մի կենդանիի մէջը և այդ անունը չի տալ, օրինակ, մեծ մսակերներին, ինչպէս առիւծը, կամ փոքրներին, ինչպէս սֆէքսը, որոնք անմիջապէս կամ համօրէն սպանում են մի կենդանիի այն ուտելու համար: Դասակարգելու մարդկային պէտքին համար մենք գործ ենք ածում մակարոյց բառը միայն այն ժամանակ, երբ շահագործող գործարանաւորութիւնը աւելի փոքր ու աւելի տկար է քան շահագործուող հիւրընկալը, և մակարուծութիւն չենք ասում, երբ հարցը տկարի կամ փոքրիկի բռնի, վայրագ տիրապետութեան մէջ է կայանում, մի լաւագոյն զինուածի կողմից: Բնութիւնը ինքը այդպիսի տարբերութիւններ չի ճանաչում:

Ուրեմն, երբ ես մարդկային մակարուծութիւն եմ ասում, այդ բառը ես իրա զուտ կենսաբանական իմաստովը չեմ վերցրնում, հապա մի քիչ, նմանողութեամբ: Մարդու, ինչպէս նաև բոլոր քիչ թէ շատ բարձր տեսակի կենդանիների դոյութեան բնական, կանոնաւոր պայմանն է իրանց սնունդը իրանց պատկանած տեսակից դուրս վերցնել բնութիւնից: Գայեկը Մայիս, 1903.

իրար չեն պատառուտ, ասում է առածը, որը դրանով ճշմարտագլխ մի կենսաբանական օրէնք է արտայայտում: Չափազանց հազւագիւտ են այն տեսակները որոնց մէջ ցեղակերութիւնը (cannibalisme) նկատելի լինի, ոչ այլ կերպ էթէ ոչ իբր բացառիկ մտամոլորութիւն և հազիւ թէ ոչ ակտաբանական:

Մարդը ի բնէ մարդակեր չէ: Վայրենի վիճակում նա երբեք իր ցեղի մէջ մարդակեր չէ, թէև պատահում է որ նա իրան մեռած ծնողների դիակները ուտէ: Մարդակերութիւնը տեղի ունի միայն թշնամիի վերաբերմամբ որը մի պատեհ ենթադրութեամբ նկատուում է իբր ոչ ցեղակից այլ մի ուրիշ տեսակի արարած: Մարդը օգտուում է բնութեան ընծայած կենդանական և բուսական աշխարհից: Նա ինքն է աշխատում իր ապրուստի համար, առանց այն խնդրելու իր մերձաւորից, ի բաց առեալ իր կնոջից, որին նա, բնական վիճակում, սիրում է աշխատեցնել իրան համար: այս իրողութիւնը կարելի է իբր առաջին օրինակ համարել մարդու՝ մի ուրիշ մարդու շահագործման և գուցէ իբր առաջին ցուցմունք ոճրային հակամտութեան:

Քանի յառաջանում է քաղակրթութիւնը, և մարդը հեռանում է իր նախնական վիճակից, նոյնչափ բարդւում են նրա յարաբերութիւնները բնութեան և ուրիշ մարդկանց հետ: Նա այլ ևս չէ կարող ամեն պարագայի իր սննդեան համար դիմել սոսկ բնութեան: Բնութիւնը սեփականացրուած է լինում զբաւողներից, որին նրանք մենաշնորհում են ի նպաստ իրանց: Միւսները, որոնք ոչ հող ունին և ոչ ջուր, սնունդ կարող են հայթայթել երկրորդ ձեռքից, հողի և նրա բնական արդիւնքների յափշտակողներից: Քաղաքակրթութեան այս ֆազիսում սկսում է աշխատութեան բաժանումը: Մարդիկ կազմակերպւում են տնտեսապէս: Արդիւնաբերութիւնը զանազանակերպւում է և մասնաւորւում: Ընտանիքը, ցեղը, ազգը, ամբողջ տեսակը, վերածւում է գործակցական (cooperatif) հասարակութեան, որի իւրաքանչիւր անդամը աշխատում է ամենքի համար, որը և իր շարքին ստանում է հասարակական արդիւնաբերութիւնից իր պէտքերի բաւականութիւնը: Մարդիկ կախուած են իրարից, մէկը միւսներով է ապրում, հողի սեփականատէրերը մի քիչ նւազ չափով, հողից զրկուածները մի քիչ աւելի չափով:

Այս յարաբերութիւններից չէ սակայն, որ յառաջանում է մակաբուծութիւնը, վասնզի այստեղ կայ գործակցութիւն, կայ փոխադարձութիւն: Սա «տուող տուողի» օրէնքն է: Ինչ որ խնդրւում է մերձաւորից, վճարւում է նրան մի ենթադրագլխ համարժէք իրով: Մակաբուծութիւնը սկսում է միայն այն ժամա-

նակ, երբ այդ գործակցական հասարակութեան մէջ երևան են գալիս անձնաւորութիւններ, որոնք վերցնում են առանց վճարելու, որոնք յափշտակում են ուրիշի աշխատութեան պատուը առանց նրա համաձայնութեան և առանց փոխարինութեան, որոնք մի խօսքով վերաբերում են ուրիշ մարդկանց հետ այնպէս, իբր թէ նրանք նախնական նիւթ լինէին, ուսկից վերցընում են իրանց ամեն կարգի պէտքերի և ցանկութիւնների բաւականութիւնը: Նրանք, որոնք ընկած են այս մականութեան մէջ, արդարև ոճրագործներ են:

Ահա այս կէտումն է, որ իմ վարդապետութիւնը մի քիչ հեռանում է իմ ուսուցիչ և բարեկամ Լոմբրոզօի վարդապետութիւնից: Նրա համար՝ մարդու նախնական վիճակը ոճիրն է, ուստի ոճրի երևումը քաղաքակրթութեան մէջ առհաւում լին է: Ես չեմ կարծում որ մարդը իր ծագման ժամանակ մի ոճրագործ եղած լինի, այսինքն մի մակաբոյժ. ընդհակառակն, ամեն ինչ ցոյց է տալիս որ մակաբուծութիւնը քաղաքակրթութեան մի մակերեւոյթն է և որին հանդիպում ենք կազմակերպուած հասարակութեանց մէջ: Հետևաբար, ոճիրը առհաւում լին չէ, հապա մի նոր, համեմատաբար յետագայ երեւոյթ, անհատական և հասարակական իրաւարացման, զանազակերպուած մի հասարակութեան հիւսնդագին վիճակի մի ախտանիշ:

IV

Հասանք այժմ սա կարևոր հարցին, ինչու մարդիկ լինում են մակաբոյժ: Նրանց ուղիղ վիճակը լինելով ապրելի հաշիւ բնութեան, կամ, աւելի յառաջացեալ քաղաքակրթ վիճակում, մերձաւորին օգտակար մի աշխատութեամբ, նրանից դնահատուած և նրանից կամուրջն վճարուած՝ իրա յատուկ աշխատութեան արդիւնքով, ինչպէս է լինում, որ մի սբոյ ժամանակում մարդկանցից ոմանք փոխում են իրանց բնաւորութիւնը, դուրս են գալիս փոխադարձութեան ընդհանուր սկզբունքից, ապստամբւում են փոխանակութեան անտեսական օրէնքի դէմ և սկսում են ապրել իբր մակաբոյժներ ի հաշիւ ուրիշ մարդկանց: Այս հարցում ես վերստին համաձայնում եմ Լոմբրոզօի հետ: Մականութեանը աշխատեման մի երեւոյթ է: Այլասեռեալը մի տխրոյթ է, որ չնորհիւ նուազագոյն ճիշդ օրէնքին հետամուտ է շահագործելու իր մերձաւորին, փոխանակ ապրելու նրա հետ համարժէք փոխանակութեանց հիման վրայ, որովհետև այդ իրա համար աւելի հեշտ է:

Բնականաբար, ընկերական մարդու՝ հակընդդէմական մա-

կարոյծի՝ կերպարանափոխութեան մեքենականութիւնը մի քիչ աւելի բարդ է քան որչափ թւում է այս վերեւի վերջին պարբերութեան մէջ: Այլասեռեալի տխեղծութիւնը իսկապէս՝ նրա ընդհանուր գործարանաւորութեան ստորագասութեան դեռ մէկ կողմը, մէկ հետեանքն է: Նրա նեարդային նիւթը բուլ է՝ նա քիչ է զգայուն, երբեմն նոյն իսկ անզգայ է արտաքին տպաւորութեանց, ու այս թմբրի հետեանքն նա նոյնչափ անզգայ է և բարոյապէս: Նրա ինքնագոյնի կարողութիւնը շատ նուազ է կամ ոչինչ, ուստի անկարելի է նրան դիմադրել իւր գրգռներին կամ ցանկութիւններին: Նրա նեարդային կեդրոնները տկարանում են արագապէս, ուստի անկարող է կանոնաւոր, դասաւոր և տևական ճիշդի՝ Հոգեբանական այս երեք պայմանները ստիպողաբար տանում են մակարեւծութեան, այն է ոճրագործութեան: Այլասեռեալի անզգայութիւնը նրան անտարբեր է պահում իւր մերձաւորի վրայ իրա պատճառած նեղութեանը և անհաճոյութեանը, նրա ինքնագոյնի փոքր կարողութիւնը արգելում է նրան ղեկավարել իւր փափագները ըստ իւր միջավայրի սովորութեանց և օրէնքներին, նրա նեարդային կեդրոնների արագ տկարացումը բացարձակ արգելք է որևէ շարունակական աշխատութեան, որը միակ միջոցն է ցանկալի բաւականութեանց օրինաւորապէս ստացման: Երբ մարդկային մակարեւծութեան մի առաջին դէպքը ցոյց է տալիս այլասեռեալին թէ մակարեւծութիւնը որչափ աւելի զիւրին և աւելի հաճելի է քան փոխադարձ փոխանակութեան ճիշդը, նա այլևս սովորում է նրան և այգլիսով նա դառնում է արհեստով ոճրագործ:

Ինքնավար աշխատողից մակարոյծի կերպարանափոխութեւլու մենաշնորհը՝ միայն մարդուն չի պատկանում: Մենք հաւատարապէս պատահում ենք դրան և կենդանական աշխարհում: Մի կողմ եմ թողնում այն իրողութիւնը, որ ի սկզբան բոլոր մակարոյծներն էլ ինքնարոյծ (autosite) տեսակներ պէտք է եղած լինին: Եւ խօսում եմ առանձնապէս հէնց մեր աչքերի տակ կատարուած բարքերի մի իսկական փոփոխութեան մասին: Մեղուներ կան որոնք սկսում են իրանց կեանքը իբր պարկեշտ գործաւորութիւններ: Յետոյ, մի գեղեցիկ օր, կամ գուցէ սույի մի վատ օր, նրանք ճանապարհին պատահում են մի օտար, մեղրով հարուստ փեթակի և սկսում են այն կողոպտել: Դրանից յետոյ նրանք այլևս կորած են պարկեշտ աշխատութեան համար, և մընում են գողեր և աւաղակներ մինչև իրանց կեանքի վերջին օրը: Նրանք փորձով համոզուեցին, որ աւելի հանգիստ է գողանալը, քան աշխատելը, և գերադասում են աւելի հեշտը: Շուտով նրանք կորցնում են մինչև անգամ իրանց աշխա-

տութեան զործինները՝ սրունքների փոքրիկ խողանակները, որոնցով ծաղիկների միջից հաւաքում էին ծաղիկփոշին, և այդ ժամանակ արդէն արգելուած է նրանց ունէ վերադարձ դէպի առաքինութիւն: Նրանք դատապարտուած են ոճրագործներ մնալու:

Ոճրի մասին իմ տուած սահմանը՝ իբր մարդկային մաւրութեան, կարծում եմ, բաւական ձկուն և մեծանիստ է պարփակելու համար մեր ուսումնասիրած երևոյթի բոլոր տարբեր-տարբեր տեսակները: Նա պահում է ոճրին իրա յատուկ բնոյթը և տեղը բնականուր կենսաբանական շրջանակում: Ի՞նչ հիւանդութեան՝ նոյնը կարելի է ասել և ոճրի մասին: Քանի կարծում էր թէ հիւանդութիւնը իսկութեամբ տարբեր մի բան է առողջութիւնից, առողջութեան իսկական հակապատկերը, նրա բնոյթը բոլորովին անհասկանալի էր մնացել մարդկանց: Այդ բնոյթը հասկանալի եղաւ այն ժամանակ երբ համոզուեցին որ հիւանդութիւն և առողջութիւն միևնոյն բանի, այն է կեանքի՝ զանազան կերպարանաւորութիւններն են, որ նրանց վարում է միևնոյն օրէնքը և որ նրանցից մինը գնում է դէպի միւսը, այնպիսի անզգալի փոխանցումներով որ անկարելի է նշանակել մէկի դադարման և միւսի սկզբնաւորութեան որոշ կէտը: Նոյնպէս նաև ոճիրը մի այնպիսի բան է, որին կարելի լինի անխախտելիօրէն հակադրել առաքինութիւնը, կամ ասենք՝ հէնց միայն ուղղաթուղթիւնը իբր նրա որոշապէս սահմանուած հակապատկերը: Միջանկեալ ձևերով չարագաս մի շղթայ միացնում է պարկեշտ մարդուն արհեստով ոճրագործին հետ: Ոճրի սերմը ամեն մարդու մէջ էլ կայ, միայն ամենքի մէջ էլ նա չի դարգանում: Սուրբը և մեղաւորը միևնոյն փափաղները ունին, մինը վնասերոտ, միւսը բուռն կերպով. նրանցից առաջինը բաւականաչափ ուժեղ է դիմադրելու համար իր փափաղներին, երկրորդը՝ ոչ: Այս ամենից զատ կան նաև աստիճաններ մակաբուծութեան մէջ, ինչպէս բոլոր կենսաբանական իրողութեանց մէջ, կեանքի երևոյթների ուժգնութեան մէջ, հիւանդութեանց մէջ, ալլաբուսման մէջ: Այս աստիճանաւորութիւնը բնութենուած է նոյն իսկ ձևապաշտ իրաւագէտից, որ թէև ոճրի համար չի ճանաչում կենսաբանական ունէ բնոյթ օրինական սահմանաւորութիւնից առաջ, բայց և այնպէս բաժանում է նրանց ոճիրների և քրէական յանցանքների և պատիժները համաչափում է նրանց ծանրութեան: Բայց մենք կարող ենք աւելի հեռուն գնալ քան օրէնագէտը և հալածել ոճիրը շատ աւելի հեռուից քան այն կէտը, ուր նրան վերցնում է պաշտօնական արդարութիւնը և ուր նա պատժելի է դառնում: Մակաբուծութեան սկզբնաւոր-

րութիւնները նկատելի են, եթէ կարելի է այսպէս ասել, սովորական կեանքի մէջ: Նուազագոյն ճիգի տիեզերական և անդիմադրելի օրէնքի տակ՝ դէպի մակաբուծութիւնը հակուելու, նրա մէջ ընկնելու փորձութիւնը ամեն պարագայի և քաղաքակրթութեան ամեն աստիճանների վրայ էլ՝ մեծ է: Ուժեղը, միանգամ գիտակից իւր գերազանցութեան, աւելի հեշտ է գտնում տկարների հարստահարութիւնը քան բնութեան ուժերի հետ կռիւը: Վասն զի, արդարեւ, այդ կռիւը, որը մարդկային կեանքի իսկական պարունակութիւնը ենպատակն է, պահանջում է ամեն վայրկեան ղիտելու, յարմարուելու, պաշտպանուելու աշխատութիւն, մինչդեռ մէկ անգամ կատարուած կամ առատաւելն երկար ընդմիջումներով կատարուած բռնութեան մի գործ բաւական է, որպէսզի տկարների մօտ ակնածելի դառնայ բռնաբարողը, որպէս զի սա ահի մէջ պահէ նրանց և առանց նոր ոյժերի սպառման լապահովի գնէ միանգամ տիրապետած իրաւունքները: Այսպիսով, շատ ուժեղ, բայց դիւրազգածութիւնից զուրկ անհատները, առերևոյթապէս գոնէ, դասում են մակաբոյժների շարքում, և բռնաւորների, ղիկտատորների, աշխարհակալների, քաղաքական և ֆինանսական ահաբեկիչների պատմութիւնը, իսկապէս և ղիտնականապէս զալիս կապում է ոճրաբանութեան հետ: Դիտելիք այս ինքնակալներին, սկսեալ հէնց ամենաբարձրից, թաղակիւրներից, և իջնելով բոլորովին ցածր, մինչև թեթևաօդիկ սալոնների բրիւմմէնները: Բոլորի մօտ էլ պիտի գտնէք միևնոյն բարոյական նկարագիրը, զի նրանք պատկանում են միևնոյն ընտանիքին, ամենքն էլ միևնոյն ցանկութիւնն ունին, առան ոնէ փոխադարձութեան ուրիշից պահանջել իրանց բազմազան ախորժակների բաւականութիւնը, ամենքն էլ մակաբուծական բնազդներ ունին, ամենքն էլ տարբեր աստիճաններով ոճրագործներ են:

Քաղաքակրթութիւնը բազմապատկում և աւելի ևս ուժեղացնում է մակաբուծութեան փորձութիւնը և միանգամայն մեծամեծ դիւրութիւններ է ընձեռում՝ մակաբուծապէս հարստահարելու համար ուրիշ մարդկանց: Արդարեւ, քաղաքակրթութիւնը հոմանիշ է աշխատութեան բաժանման, ինդուստրիալիզմի, արտերի մշակման ու նախնական զբաղումների դադարման, քաղաքների զարգացման: Մարդկանց մեծամասնութիւնը այլ ևս երկրից չէ որ ինդուում է իր սնունդը և փոխանակութիւնից իւր շույլ պէտքերի բաւականութիւնը: Հապա նա արտադրում է նւթական և բարոյական արժէքներ փոխանակելի ուրիշ արժէքների հետ: Նա այլ ևս ինքնաբոյժ չէ, հապա փոխադարձական (mutualiste): Արդ, շատ դժուար բան է նժարել արժէքները, մանրաքննին կերպով արդար մնալ փոխանակութեան մէջ: Նոյն իսկ

կարգին պարկեշտ մարդը հակամէտ է միշտ չափազանցելու իր տուածի արժէքը և ցածր գնահատելու ստացած փոխանակը, աւելին ստանալու՝ քան իւր աշխատութեան ճիշդ գինը, անտեղիօրէն շահագործելու իր մերձաւորի տգիտութիւնը կամ ստիպողական հարկը: Այն վարկենից երբ մարդու ապրուստը ոչ թէ բնութեան հապա մարդուն վրայ է կանգնում, գործակցականութիւնից դէպի մակարեւծութեան փոխանցումը վերին աստիճանի դիւրանում է, նախ վեհերոտ, պատահական և բարեխառն, յետոյ ստէպ և յանդուգն, վերջապէս սովորական, բացարձակ և վայրագ: Իրերի այս դուզնութացութիւնը շատ լաւ էին զգացել հները, ստեղծելով իրանց Հերմիսին գողերի, միանգամայն և վաճառականների աստուած. մենք գիտենք, որ տուրևառը սկզբներում աւազակութեան մի տեսակն էր, և թէ իւրաքանչիւր արհեստ գաղտնի էր պահում իւր տեսական միջոցները, որպէսզի անգիտակները անկարող լինէին գնահատելու գործադրուած նիւթերի և աշխատութեան ուղիղ արժէքը: Եւ այս բանը հին ժամանակներից ի վեր փոփոխութիւն չէ կրել: Հերմեսը տէր է իւր կրկնեակ պաշտօնին: Նա այժմ, նոյն իսկ դիզելով դիզում է քան երբէք: Մեծ յափշտակողը, անխիղճ շահադէտը, մաքսապաշտը որ ի նպաստ փոքրամասնութեան և ի վնաս մեծամասնութեան զեղծանում է իւր քաղաքական իշխանութեամբ և ծանրաբեռնում է մի ժողովուրդ մաքսային հարկերով, ամենքն էլ տարբեր-տարբեր ձևերն են երբեմն մեղմ, երբեմն չափազանցեալ իսկ անցեալ ժամանակների հէյնն և ամեն ժամանակների աւազակին, թէև օրէնսդէտը քիչ անգամ համաձայնէր այս նոյնացման: Նրանք ամենքն էլ մակարոյծներ են, ուրեմն ամենքն էլ ոճրագործներ:

V

Գանք այժմ եղբակացութեան: Ոճրի մասին իմ տուած սահմանը իբր մարդու մակարեւծութիւնը մարդու վրայ բացատրում է կարծեմ երևոյթը, պարզում է նրա պատճառադիտութիւնը և որոշում է նրա տեղը՝ ինչպէս հոգեբանութեան, նոյնպէս և անհատի ընդհանուր կենսաբանութեան և ընկերաբանութեան մէջ: Կենսաբանօրէն, մենք արդարացի կերպով կարող ենք, նոյն իսկ պարտաւոր ենք, բացարձակ տարբերութեամբ բաժանել՝ ուրիշին վնասող՝ զգայնական արարքները բուն իսկ ոճրից: Առերևոյթ իրարու նման այս երկու կարգի գործողութիւնների մէջ չի չլիթուելու համար պէտք է նկատել որ զգայնականը իւր այդ բուն գործողութեամբ ոչ մի անձնական

առաւելութիւն ձեռք չի բերում, եթէ ոչ թուլացումն իր արտակարգօրէն լարուած ջղային դրութեան, մինչդեռ մակարուծական ոճրագործը կատարում է իւր գործը պաղ արեամբ՝ նկատի ունենալով միմիան ունէ անձնական առաւելութիւն կամ բաւականութիւն։ Ոճրի տիեզերական հղօր միջնորդն է նուազագոյն ճիգի օրէնքը։ Այս օրէնքն է որ մակարոյծի է կերպարանափոխում, այն է՝ սովորական ոճրագործի, ինչպէս նախկին Հերքելլէսին որի լախտի ներքն դողում է աշխատող ամբոխը, նոյնպէս և յառաջացեալ քաղաքակրթութեան որդուն, տխեղծ այլասեռեալին, որը անկարող է զգում իրան տիեզերական սարքում իր որոշ տեղումը աշխատելու։

Այժմ մնում է քննելու իմ տուած սահմանի ծածկած հողը։ Այստեղ, ես նրա մի քանի կէտերը միայն պիտի նշանակեմ։ Ինձ համար տխեղծութեան պատճառով սովորական ոճրագործը մի minus habens է, ուրեմն մի հիւանդ։ Վտանգաւոր, այո, բայց հիւանդ։ Պատահական ոճիրը, մանաւանդ զգայականը, հոգեկան մի փոթորիկ է, անտարակոյս ազետաբեր, ինչպէս կարկուտը կամ երկրաշարժը, բայց աւանդ յարակից մարդկային բնութեան։ Զգայնակուն ոճիրը կարելի է զսպել միայն անընդհատ և համարալը կրթութեամբ, որի նպատակը պէտք է լինի կարելիութեան սահմանին մէջը փոխել մարդկային բնութիւնը, զարգացնելով նրանում ինքնազսպիչ ուժը։ Իսկ աններելի, իսկական ոճիրը, որը կատարելապէս զսպելի է և որի դէմ հարկաւոր է անդադար և անխնայօրէն կռիւ, այդ՝ հասարակական շահագործումն է, այսինքն մարդկային մակարուծութեան տիպիկ ձևը, որը գործ է ածում ոչ թէ օրդանական ստիպողականութեան տակ, հապա իբր դիւրատար սովորութիւն։ Այս դասակարգի ոճրագործութեան ասենազգու գեղը կարող է լինել մի այնպիսի հասարակական կազմակերպութիւն, որի մէջ կարելի լինէր կատարեալ գործակցականութիւն, անկարելի լինէր խաբէութիւնը փոխանակութեանց մէջ, որը արդեւէր ուժեղի գերիշխանութեան զեղծումը և ապահովէր տկարին, գոյութեան համար անհրաժեշտ բարեքներէ նուազագոյն չափը։

Այն վարդապետութիւնը որ ձգտում է այդ իդէալի իրականացման, կոչւում է ընկերավարութիւն։

Դ-ը ՄԱՔՍ ՆՈՐԴԱՈՒ